ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2016 թվականի N 28-Ա

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետի բ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունվարի 26-ի N13-Ն և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016թ. փետրվարի 2-ի N64-Ն համատեղ հրամանը. **որոշում եմ՝**

1.Հաստատել.
1/Զբաղվածության աջակցության Սյունիքի մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2/Զբաղվածության աջակցության Սյունիքի մարզային հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
2.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. մարտի 25
ք. Կապան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ.մարտի « 25 » N 28-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնադրությունը սահմանում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմավորման և գործունեության կարգը:

2.Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:

3.Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Հանձնաժողովի նպատակն է՝

1) ապահովել Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով նախատեսված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումը,

2) իր իրավասության շրջանակներում աջակցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից
ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների նպատակային և առավել հասցեական օգտագործմանը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) քննարկել հանձնաժողով ներկայացված ծրագրերի նախագծերը և երկու աշխատանքային օրվա
ընթացքում համապատասխան որոշում ընդունել ծրագրերը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 21 հավելվածով հաստատված կարգի 50-րդ կետով սահմանված դեպքերում որոշում ընդունել ծրագիրը ժամկետից շուտ դադարեցնելու վերաբերյալ,

3) քննարկել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքների մասին ծրագիրն իրականացնող համայնքի ղեկավարի կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, ծրագրի ավարտը հավաստող փաստաթղթերը և հիմք ընդունելով ամփոփ կատարողական ակտը՝ կայացնել որոշում դրանք հաստատելու վերաբերյալ,

4) ապահովել իրականացվող ծրագրերի հրապարակայնությունը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում և փոփոխում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետը:

7. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համապատասխան բնագավառը համակարգող մարզպետի տեղակալը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալ մարզի վարչական տարածքում գործող տարածքային կենտրոնի տնօրենը, մարզպետարանի՝ սոցիալական պաշտպանության ոլորտի գործառույթների իրականացումն ապահովող ստորաբաժանման ղեկավարը, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ աջակցող ցանցի մասնակիցների ներկայացուցիչը (աջակցող ցանցի առկայության դեպքում), սոցիալական աջակցության ոլորտում գործող, ինչպես նաև աշխատողների և գործատուների շահերը ներկայացնող և տվյալ տարածքում գործող երեքից ոչ ավելի հասարակական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչ:

8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

9. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

11. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

12. Հանձնաժողովի նախագահին նշանակում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետը, իսկ քարտուղարն ընտրվում է հանձնաժողովի կազմից, առաջին նիստում՝ նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

13. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

14. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի որոշմամբ:

15. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

3) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին,

4) հանձնաժողովի կողմից կայացված որոշմանը դեմ քվեարկելու դեպքում կարող է հատուկ կարծիք ներկայացնել հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

16. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը, շրջանառում է այն և համակարգում հանձնաժողովի անդամների դիտողությունների ու առաջարկությունների քննարկման գործընթացը:

17. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

18. Հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում՝ ձայների հավասար բաշխման դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

19. Հանձնաժողովի նիստին մասնակցում է ծրագրի նախագիծ ներկայացրած համայնքի ղեկավարը և ներկայացնում է ծրագրի նախագիծը:

20. Հանձնաժողովի հրավերով նիստերին կարող են մասնակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կամ այլ կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

21. Հանձնաժողովի գործունեությունը կարող է դադարեցվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. փետրվարի 25-ի N 28-Ա որոշման

Կազմ

Զբաղվածության աջակցության Սյունիքի մարզային հանձնաժողովի

1. Դավթյան Վարդան	-	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
2. Շահնազարյան Արամ	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
3. Հակոբյան Արտուր	-	Կապանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն
4. Գալստյան Վարուժան	-	Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն
5. Արմենակյան Ֆլորա	-	Սիսիանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն
6. Հակոբյան Սարգիս	-	Մեղրիի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն
7. Արզումանյան Անահիտ	-	«Կարմիր խաչի» Սյունիքի մասնաճյուղի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/
8.Հարությունյան Խորեն	-	«Ազատամարտ» կոմիտեի նախագահ /համաձայնությամբ/

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար Գ.Թադևոսյան